

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ,
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

1. Ընդհանուր դրույթներ
<p>1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գյուղատնտեսական խորհրդատվության, նորարարությունների և մոնիթորինգի վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ 23-32.5-Ղ3-1)</p> <p>1.2. Ենթակա և հաշվետու է Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Էկոնոմիկայի նախարարին:</p> <p>1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ Վարչության պետին ենթակա և հաշվետու են Վարչության աշխատողները և Վարչության բաժնի պետերը:</p> <p>1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալներից մեկը:</p> <p>1.5. Աշխատավայրը Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միեր Մկրտչյան 5</p>
2. Պաշտոնի բնութագիրը
<p>2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները</p> <ol style="list-style-type: none">Ապահովել գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մշակմանը մասնակցությունը և օժանդակության իրականացումը,Ապահովել խորհրդատվության համակարգի զարգացման առաջնային ուղղությունների նախանշման և իրականացման հետ կապված աշխատանքները,Ապահովել խորհրդատվական ծառայությունների շարունակական զարգացման համար այլ կառույցների հետ համագործակցությունը,Ապահովել խորհրդատվական համակարգի, տեղեկատվության և գիտելիքի, նոր տեխնոլոգիաների ինչպես նաև հաջողված փորձի մասսայական տարածման իրականացման աշխատանքները,Ապահովել խորհրդատվական ծառայությունների իրականացում և դրանց որակի նկատմամբ հսկողությունը,Ապահովել այլ երկրների, ինչպես նաև գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնների հետ գիտության բնագավառում համագործակցությունը,Ապահովել ագրարային ոլորտի մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջարկի մոնիթորինգ,Ապահովել գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար անհրաժեշտ տվյալները հավաքելու և մշակելու նպատակով ուղեցույցների կազմումը և մեթոդական աջակցության տրամադրումը,Ապահովել գյուղատնտեսության բնագավառի ծրագրերի իրականացման ընթացիկ և արդյունքային ցուցանիշների հավաքագրումը, ամփոփումը, մշակումը, վերլուծությունը և

գնահատումը,

10. Ապահովել գյուղատնտեսական ծրագրերի ընթացքի, ազդեցությունների և արդյունավետության գնահատման նպատակով մոնիթորինգի գործընթացի իրականացման հետ կապված աշխատանքները և կառավարումը,

11. Ապահովել գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունների ներդրման և դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա վարչական վիճակագրական ռեգիստրների վարումը,

12. Ապահովել տեղական և արտասահմանյան բուհերի, միջազգային գիտական կենտրոնների և գյուղական խորհրդատվական ծառայություններ մատուցող գերատեսչությունների և կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ փորձի փոխանակման և վերապատրաստումների կազմակերպման շրջանակներում,

13. Ապահովել գյուղատնտեսական հումք, արտադրանք, տեխնիկա արտադրող և ներմուծող կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ գիտական աշխատանքների և նորարարությունների տեղայնացման ուղղությամբ,

14. Ապահովել գիտական կենտրոնների, ուսումնական հաստատությունների և օրինակելի տնտեսությունների հետ համագործակցությունը՝ փորձացուցադրական տարածքներում խորհրդատվական միջոցառումների կազմակերպմամբ գյուղացիական փոքր տնտեսությունների համար նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը տեսանելի և կիրառելի դարձնելու նպատակով:

Իրավունքները՝

- Ստանալ գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մշակման և օժանդակության իրականացման հետ կապված առաջարկություններ և համապատասխան տեղեկատվություն շահագրգիռ մարմիններից,

- Պահանջել խորհրդատվության համակարգի զարգացման առաջնային ուղղությունների նախանշման և իրականացման հետ կապված առաջարկություններ,

- Պահանջել խորհրդատվական ծառայությունների շարունակական զարգացման համար այլ կառույցների հետ կապված առաջարկություններ համագործակցության շրջանակներում,

- Պահանջել խորհրդատվական համակարգի, տեղեկատվության և գիտելիքի, նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև հաջողված փորձի մասսայական տարածման, խորհրդատվական ծառայությունների իրականացման իրականացման հետ կապված առաջարկություններ,

- Ստանալ այլ երկրների, ինչպես նաև գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային կենտրոնների հետ գիտության բնագավառում առաջարկություններ համագործակցության շրջանակներում,

- Պահանջել ագրարային ոլորտի մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջարկի մոնիթորինգի իրականացման հետ կապված առաջարկություններ,

- Պահանջել գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար անհրաժեշտ տվյալները,

- Պահանջել գյուղատնտեսության բնագավառի ծրագրերի իրականացման ընթացիկ և արդյունքային ցուցանիշների հավաքագրման, ամփոփման, մշակման, վերլուծության և գնահատման հետ կապված տեղեկատվություն,

- Պահանջել գյուղատնտեսական ծրագրերի ընթացքի, ազդեցությունների և արդյունավետության գնահատման նպատակով մոնիթորինգի գործընթացի իրականացման հետ կապված առաջարկություններ,

- Պահանջել գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման

համար հարցաթերթեր, ձևաթղթեր, տեղեկանքներ,

- Ստանալ տեղական և արտասահմանյան բուհերի, միջազգային գիտական կենտրոնների և գյուղական խորհրդատվական ծառայություններ մատուցող գերատեսչությունների և կազմակերպությունների հետ առաջարկություններ, կարծիքներ համագործակցության շրջանակներում,

- Գյուղատնտեսական հումք, արտադրանք, տեխնիկա արտադրող և ներմուծող կազմակերպությունների հետ համագործակցությունը ապահովելու նպատակով՝ ստանալ առաջարկություններ գիտական աշխատանքների և նորարարությունների տեղայնացման ուղղությամբ,

- Գիտական կենտրոնների, ուսումնական հաստատությունների և օրինակելի տնտեսությունների հետ համագործակցությունը ապահովելու համար ստանալ առաջարկություններ փորձացուցադրական տարածքներում խորհրդատվական միջոցառումների կազմակերպմամբ գյուղացիական փոքր տնտեսությունների համար նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը տեսանելի և կիրառելի դարձնելու նպատակով:

Պարտականությունները՝

- Ներկայացնել առաջարկություններ գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մշակումը և իրականացումը ապահովելու նպատակով,

- Ապահովել խորհրդատվության համակարգի զարգացման առաջնային ուղղությունների իրականացման հետ կապված աշխատանքները,

- Ամփոփել խորհրդատվական համակարգի, տեղեկատվության և գիտելիքի, նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև հաջողված փորձի մասսայական տարածման իրականացման հետ կապված աշխատանքները,

- Ապահովել խորհրդատվական ծառայությունների իրականացմանը,

- Ապահովել ագրարային ոլորտի մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջարկի մոնիթորինգի իրականացումը,

- Ափոփել և մշակել գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար անհրաժեշտ տվյալները, և ապահովել մեթոդական աջակցության տրամադրումը,

- Ապահովել գյուղատնտեսական ծրագրերի ընթացքի, ազդեցությունների և արդյունավետության գնահատման նպատակով մոնիթորինգի գործընթացի հետ կապված աշխատանքները,

- Ամփոփել, վերլուծել և գնահատել գյուղատնտեսության բնագավառի ծրագրերի իրականացման ընթացիկ և արդյունքային ցուցանիշները, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտի ծրագրերի մոնիթորինգի և գնահատման համար համապատասխան վարչական վիճակագրական հաշվետվությունները ներդրման և դրանց միջոցով հավաքագրված տվյալները ու տեղեկությունները:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ հինգը տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ հինգ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

- Աշխատակազմի կառավարում
- Քաղաքականության վերլուծություն, մոնիտորինգ
- Որոշումների կայացում
- Ծրագրերի կառավարում
- Խնդրի լուծում
- Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

- Բանակցությունների վարում
- Տարածքային կառավարում
- Կոնֆլիկտների կառավարում
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
- Բողոքների բավարարում
- Ժամանակի կառավարում
- Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
- Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
- Փաստաթղթերի նախապատրաստում
- Ֆինանսների և ռեսուրսների կառավարում:

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար կամ կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման կամ կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն և ազդեցությունը սահմանափակվում է համապետական մակարդակով որոշակի ոլորտով:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: